ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դուրս է գալու մամուլի տակից Նիկոլայոսի Յ. Ալիխանեան շարադրութիւնը. Լրատուդ Լրկորդ, ողբերգութիւն հինգ արարուածի մէջ, ոտանաւորով գրած: Գինն է երկու բուբլի: Դրամագլուխները պահանջելով մինչի հարիւր հատոր ունեն 10% զեղչումն. իսկ աւելի—20%: Փոշտի ծախսը հեղինակը առնում է իր վրայ:

Յանկացողները կարող են դիմել ուղղակի հեռեւեալ հասցեով:

Въ Майкопѣ, Кубан. обл. Мировому Судьѣ 1 Участка, Николаю Іосифовичу Алиханову.

1—5

ՀԱՑԵՐԷՆԻ, ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՖՐԱՆՍԷՐԼԻՆԻ ԵՒ ԻՏԱԼԵՐԷՆԻ ԴԱՍԵՐ: ԵԶԻԿԵԱՆՑ: Հայցէն հարցնել «Մշակի» խմբագրատուն:

5—5 (2)

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ յայտնում է, որ սեպտեմբերի 21-ին կը բացուի արհեստական և սկզբնական ուսումնարանները, իսկ սեպտեմբերի 15-ից կը սկսուին ընդունելական քննութիւնները:

3—3

Մամուլի տակից շուտով լոյս կը տեսնէ ՆՈՂԿԱՔԱՂ ԱՂԴԱՑԻՆ ԵՐԳԵՐԻ, իբրև երգեցողութեան դասագիրք հայ դպրոցների համար: Գիրքը բաղկացած է երկու մասերից: I մասում զետեղուած են թէ տպուած և թէ մինչև այժմ մեր միւս երգարաններում անտիպ մնացած և ամէն տեղ տարածուած երգեր: II մասում մանկական երգեր: Մաղկաքաղը այն առաւելութիւնն ունի միւս երգարաններից, որ իւր մէջ չէ պարունակում դպրոցական հասակին անվայել և անյարմար երգեր: Հեղինակներից զլխաւոր տեղերը բռնում են Նալբանդեանց, Պէշիկթաշլեան, Նարբէյ Ֆէշկեան, Պատկանեանց, Ալիշանեան, Բարխուդարեանց, Աբովեան, Դուրեան, Հայկունի, Թաղիսթեանց, Նահապետեանց, Դոդոխեանց, Մէզպուրեան, Այվազեանց, Թերզեան, Մելիք-Յակոբեանց, Մուրատեանց և այլն և այլն.

2—2

Մի Ագուլեցի երիտասարդ, որ վաճառականութեան մէջ եղել է, ցանկանում է տեղ ունենալ մագազինում: որից ապահովելու համար ունի երաշխաւոր անձինք, պայմանների համար դիմել «Մշակի» խմբագրատանը:

8—8

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԵԱՆ ՕՂԻ գործարանատէրը թիֆլիսում Շաուի յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկսվեցին ծախվել ամենալաւ մաքրված ՕՂԻՆԵՐ հետեւեալ անուններով. ՍԵՂԱՆի, ԲՐԻՆՋԻ և ԲՈՒԼՄՈՒՐԻՆ: Շիշը ամենով արժէ 45 կ., առանց ամանի 38 կ., կէս շիշը 25 կ., առանց ամանի 20 կ., կ., ամէն այլ տեսակ օղիներ առանձին ցուցակ ունեն: Մեծ քանակութեամբ առնողներին նշանաւոր զիջումն է անվում: Օղիները պատրաստված են ամենալաւ հացի ՍՊԻՐՏԻՑ շոգիի մաքրելու օգնութեամբ և իրան յատկութեամբ ՄԱՑՈՒԱ-ՔԱՂԱՔԻ ամենալաւ գործարանների մէջ պատրաստվածներից վատ չեն: Պ. պ. գնողների ուշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրայ, որի արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է: Օղիների պահեստը գտնվում է Մաքայէլեան կամուրջի վրայ, Յեկատերինայա հիւրանոցի տակ, Լիխատինովս տանը, Վասիլեվի արձանի դիմացը:

7—8 (2 շաբ.)

ՐԻՀԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՒՕՏՅԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՎ 1 ԺԱՄԸ

Երկուշաբթի. Գավրոնսկի կանանց և մանկաբարձական հիւանդ. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շաեմ բօրսկի վիներական և կաշու հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ.. Միրոշնիչենկո ներքին, կրծքային և երեխաների հ., Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ.:

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Շաեմբրօրսկի վիներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Գավրոնսկի մանկաբարձական և կանանց հ., Միրոշնիչենկո ներքին, կրծքային և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Մինկեվիչ խիրուրգիական հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շաեմբրօրսկի և Աստվածատուրով ներքին և կաշու հ.:

Շաբաթ. Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ.:

Առամնաբոյժ Օրբելիա ազգան հիւանդներին բժշկանոցի տոմսակով ընդունում է իր տանը ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ

Ներկայ սեպտեմբերի 1-ից ՀԱՒ. ԲԱՐՈՒԻՐ բացվեցաւ մի հայոց ՏԻԵԱԿԱՆ ԴՊՐՈՑ: Հրաւիրում ենք սրա վրա Հաւատարցիների ուշադրութիւնը: Աշակերտներ ընդունվում են ամէն օր մինչև տարուայ վերջը: Իսկ յետոյ կորոշուի ընդունելութեան ժամանակամիջոցը: Թոշակի մասին կարելի է տեղեկանալ ուսումնարանում, որ գտնվում է «Մարիամեան դպրոցի մօտ, Вахтангская улица,» № 32.

2—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ նա արել է հետեւեալ կարգադրութիւններ. 1) խոտով և փայտով բեռնաւորված սայլերին թոյլ չը տալ կանգնել Հաւլաբարի հրապարակի վրա, այլ ուղղորդել նրանց Լօրնայա հրապարակը, որ առաջինի մօտ է գտնվում և 2) Ակեան, դրօվսկայա և Անդրէեվսկայա փողոցների մէջ գտնված Կուկիսկայա հրապարակը բանալ և դիւղացիներին ուղարկել այնտեղ ծրիարար կոնդնելու համար:

2—3

Ընդունում եմ ամէն տեսակ պատուէրներ ԿՈՆՖԷԿՏՆԵՐԻ, ՊԵՐՈԺՆԻ, ՍՈՒԽՈՒՐԻ զանազան տեսակի, մուրաբի, և ընտիր տեսակ ՖՐՈՒԿՏՈՎԻ ԿՈՆՖԷԿՏԻ, և ամէն տեսակ կոնդիտերի ապրանքի, շատ մատչելի գներով: Պատուէրները կը կատարվին ամէն ճշտութեամբ, և խղճմտաբարձակացողք կարող են դիմել ինձ հետեւեալ հասցեով, Въ Тифлисѣ, МАРТИРОСУ АХНАЗАРОВУ. НА СОЛОЛАКСКОЙ УЛИЦѢ, МАГАЗИНЪ ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ. փոստային կոնֆիկտ պահանջողների ճանապարհածախքը ինձ վրա եմ առնում,

Մ. Հախնազարեանց.

12—50

ՆՈՐ ՀԱՆԴԻՍ

ՖԻԼԻՊՈՎԻՉ ԵՒ ԸՆԿԼՈՒՍԱՆԿԱՐԻ չորս ամսվայ գործունէութեան հետեւանքները: (Առանձնապէս լուսանկարի համար կառուցած շինութեան մէջ): Գօրօվինսկի փողոց, տուն Կ. Լաս. Զուբալովի, Թիֆլիսի կը լուրի մօտ: Բաց է ամէն օր առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 7 ժամը:

1—10

Դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Կենտրոնական և Զ. Գրիգորեանցի գրախանութներում Ս. Մանդինեանի հետեւեալ դասագրքեր.

1. Ազգային Ընտանեկան աշխարհք և Այբենարան (ա. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . .	25 կ.
2. Նոյնը ուսուցիչների համար բացատրութիւններով հանդերձ)	75 կ.
3. Ազգային Գիւղացոյական աշխարհ (բ. տարուայ ուսմունք և ընթերցմունք)	30 կ.
4. Նահապետական և հայրենի աշխարհ (գ. տարուայ ուսմունք և ընթերցմունք (բ. տպագրութիւն)	65 կ.

Կ. ՊԱՆՅԵՐ, ԱՏԱՄԱՆՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ տուն ՉՈՒՐԱԼՕՎԻ: Երկոյ ձրմեռվայ սեզօնի համար առաջարկում եմ պատուելի հասարակութեանը ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՉԵՒՕՒՅ և ՈՏՔԻ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐ, եւրոպական առաջնակարգ ԳԻՐԾԱՐԱՆՆԵՐԻՑ, ամենանոր ՉԵՒՕՒՅ չափազանց էժան գներով, այսինքն: Չեռքի մեքենաներ 12—'5 բուբլ: Ոտքի 50—80 բուբլ:

7—52

Հայոց պատմութիւնը իսկական աղբիւրներից ուսումնասիրելու համար կարևոր մի գիրք է «Հիսուսածք բանից նախնի պատմագրաց հայոց» 3 հատոր, աշխատաս. Կ. Կոստանեանցի:

Ա. հատորը բովանդակում է Արշակունեաց թագաւորութեան անկման և Վարդանանց ու Վահանեանց պատերազմների մանրաման պատմութիւնը ժամանակակից պատմիչների խօսքերով հիւսած գրաբար:

Բ. հատորը բովանդակում է նոյն պատմութիւնը աշխարհաբար, որ ա. հատորի ճիշտ թարգմանութիւնն է.

Գ. հատորը բովանդակում է ա. և բ. հատորների համար կարևոր ծանօթութիւններ. ժամանակագրական աղիւսակներ յաւելածներ:

Վաճառվում են երեք հատորը միասին—3 ր.

ա. և բ. հատորը միասին 2 ր. 25 կ.,

բ. և գ. հատորը միասին 2 ր. 25.,

Ազգային դպրոցների համար 10 օրինակից աւել առնողին 10% զեղչումն կը դրուի. գնելու համար դիմել—Ալէքսանդրապոլ—Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանցին.

Տֆխիս—Կենտրոնական գրավաճառանոց:

Մոսկվա—Հայոց եկեղեցու երեցփոխան պ. Մելքոն Փանեանցին:

10—10

Дозволено цензурою Тифлисъ, 19 Сентября 1880 г. Տպարան եղբայրք Դաւթեանցների Типографія братьевъ Давидовыхъ